

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայց.

Շարական

Ա.

Հայոց հայրապետական աթոռը այն հաստատութիւնն է, որ երկար դարերից ի վեր հայ ժողովրդի համար սրտի պաշտօն է կատարել, հոգեւոր սնունդ և կեանք պարգեւել նորա ամբողջութեան, զգայուն կեդրոն հանդիսացել նորա ցաւերին և սակաւ ուրախութիւններին։ Նորա պատմական արժէքը լաւ գնահատելու համար պէտք է հոգու առաջ կենդանացնել Հայոց եկեղեցու կրօնական, քաղաքակրթական և հոլովական ամբողջ գործունէութիւնը իւր բազմազան կողմերով և մանրամասնութիւններով. որովհետեւ հայրապետական աթոռը ամբողջ եկեղեցու տեսանելի և թանձրացեալ արտայայտութիւնն է։ Հայրապետական աթոռի նշանակութիւնը բացատրելու համար պէտք է ամբողջ եկեղեցու գործունէութիւնը գնահատել։ Բայց հէնց հայոց հայրապետների յաջորդութիւնը 1600 ձիգ տարիներից ի վեր մեր առաջ է դնում բազմաթիւ պատկառելի անձնաւորութիւնների մի շարք, որոնք մեր պատմութեան լուսաւոր գիծն են կազմում և որ անկարելի է ջնջել, որչափ էլ մեր սրտի մէջ ցամաքած լինի երախտագիտութեան զգացմունքը, իսկ մեր գլխում մարած լուսոյ և ճշմարտութեան նշոյլը՝ իրողութիւններն ըմբռնելու և դատելու իրենց իսկական գնահատութեամբ։ Այս երկար շարքի գլուխն է կանգնած Հայաստանեայց Լուսաւորչի առաքելատիպ մեծ անձնաւորութիւնը, որչափ և առասպելախառն իւր ծագման և գործունէութեան

տեղեկութիւններով, բայց շոշափելի և տեսանելի իւր հրապարակական գործով և կազմակերպող տաղանդաւոր հոգւով: Նորա գործունէութեան կենդանի արձանը Հայոց եկեղեցին է իւր կազմակերպութեամբ, որ պատմութեան մութ խորքերից յանկարծ երևան է գալիս չորրորդ դարու սկզբում՝ կարծես դիւթական գաւազանի շնորհիւ: Նոյն առաքելական գործունէութեան շաւղով են ընթանում և նորա յաջորդները, իւրաքանչիւրը իւր ժամանակի և պատմական բերմունքների համեմատ: Մէկը աւետարանի լուսոյ գաղափարն է տարածել հայ ժողովրդի մթին խորքերը, միւսը գթութեան և դպրոցական հաստատութիւններով զարդարել մեր երկիրը, երրորդը զիր ու դպրութիւն է ստեղծել, ազգային քաղաքակրթութեան հիմնադիր և պաշտպան հանդիսացել մեր հիւսիսային, ցուրտ և խաւար հայրենիքում: չորրորդը կենդանի նահատակ հանդիսացել իւր հօտի հետ պատերազմի դաշտում, հինգերորդը մաքառել մայրենի և ազգային եկեղեցու ինքնուրոյնութեան և անկախութեան համար, միութեան և համերաշխութեան կապ հանդիսացել եսական շահերով գրգռուած հայ իշխանների և թագաւորների մէջ, արտաքին թշնամիների և բռնակալների բարկութիւնը մեղմել հայրենի երկիրը կորստից ազատելու համար, բարբարոսների արշաւանքից ու աւերմունքից յուսահատ ժողովրդին վերակենդանութեան յոյսներ չնչել, նորոգել նորա աւերակ տաճարներն ու վանքերը, դպրոցներ և վանական մատենադարաններ հիմնել, փրկել գերիների խմբերը, սգաւորներին մխիթարել, այրիների և որբերի արցունքը սրբել կարողութեան չափ...: Հայոց պատմութիւնը տառապանքների և նեղութեան, կոտորածների և գերեզմարութիւնների անվերջ շղթայ է, կենդանի նահատակութեան աննման մի երևոյթ ազգերի կեանքում: Ազգերի և բարբարոսների մրցութեան ասպարէզ էր մեր թանգագին, բայց դժբաղդ հայրենիքը: Հին Պարսիկներին յաջորդում են Արաբներն ու Բիւզանդացիները, Սելջուկներն ու Թաթարները, կոտորած, սարսափ և արհաւիրք սփռելով ամէն տեղ: Ընկնում են միմեանց յետևից

իշխանական և թագաւորական տները, ոչնչանում են քաղաքական անկախութիւնն ու քաղաքակրթական հաստատութիւնները և միայն Հայոց հայրապետական աթոռն է, որ առ կայծեալ պատրոյգի նման անշէջ է մնում որպէս հայ ժողովրդի միակ յուսոյ և մխիթարութեան ապաւէն: Նա թէև աստանդական, փառքից և շքեղութիւնից զրկուած, բայց կատարում է հնաւորութեան շափ իւր պարտքը խնամածու և կորովագութ մայր հանդիսանալով իւր հօտին: Եւ այս է պատճառը, որ երախտագէտ ժողովուրդն այնպիսի հրաշալի աւանդութիւններ է հիւսել նորա նշանակութեան մասին և իւր երգիչների բերանով սրտառուչ մաղթանք ուղղել առ Աստուած. «Միշտ անշնորթ պահեա զաթոռ հայկազնեայց»:

Բ.

Բայց Հայոց հայրապետական աթոռի նշանակութիւնը ոչնչով նուազ չէ այժմ անցեալից: Իւրաքանչիւր ազգպէտք է մի կեդրոն, մի սրբավայր ունենայ, ուր ուղղել կարողանայ իւր աչքը իբրև ամբողջութիւն: Այդ կեդրոնն ու սրբավայրը հայ ժողովրդի համար Ս. Էջմիածինն է, Հայաստանեայց եկեղեցու ծագման և հաստատութեան որորանը, առաքելաշաւիղ Ս. Լուսաւորչի և նորա յաջորդների, Իսկ Ժե. դարից բոլոր հայ կաթողիկոսների վերջնական աթոռանիստը: Հայրապետի անձնաւորութիւնը ինքնըստինքեան իւր հետ է կապում պաշտօնի բերմամբ հօտի ամբողջութիւնը, բայց նորա նշանակութիւնը շատ աւելի բարձրանում է և նուիրական դառնում, երբ դարերի ընթացքում միացած է մի սրբավայրի հետ: Ս. Էջմիածնի պատկառելի հնութիւնը իբրև 1600 տարիների կենդանի վկայ մեր ժողովրդի նահատակութեան, իբրև մտաւոր և հոգեւոր կեդրոն շատ խորը տպաւորութիւն է թողել մեր ժողովրդի սրտում և անխզելի կապերով շղթայել իւր հետ: Այդ հաստատութիւնն է եղել, յատկապէս Պարոից և Սամանցոց տիրապետութեան ժամանակ,

և է այն միակ կապը, որ միացնում է հայութեան բաժան բաժան և աշխարհիս երեսին ցրուած մասերը միմեանց հետ:

Ս. Էջմիածնումն է կատարուում հայրապետական ընտրութիւնը, համազգային մի գործողութիւն, որի հետ ոչ մի բան համեմատել չի կարելի մեր մէջ: Բուն երկրում թէ հեռաւոր գաղութների մէջ ապրող հայերը ամիսներով զբաղուում են արժանաւոր Հովուապետի ընտրութեան խնդրով, ազգային մամուլը իւր իղծերն ու ցանկութիւններն է արտայայտում, գումարւում են ծխական, գաւառական և թեմական ժողովներ պատուիրակներ և պատգամաւորներ ընտրելու համար: Պաշտօնական հաստատութիւնները կենդանի յարաբերութիւն են սկսում Ս. Էջմիածնի հետ Տաճկաստանից, Պարսկաստանից և այլ թեմերից: Եկեղեցական և աշխարհիկ պատգամաւորները հաւաքւում են Ս. Էջմիածնի սրբազան կամարների տակ ամբողջ ազգի ցանկութիւնը յայտնելու և ընտրութեամբ նուիրագործելու: Օծման հանդիսաւոր օրը դարձեալ հայ ժողովուրդը իբրև մի անհատ իւր աչքը դէպի Մ. Աթոռն է ուղղում: Հաւաքւում են քաղաքների, հասարակութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչները, ամենախուլ անկիւններից իսկ հեռագրով բարեմաղթութիւններ են ուղարկում նորընտիր հայրապետի համար և միանում ընդհանուր համազգային ուրախութեան: Հայ ժողովրդի ամբողջութիւնը այդ սրբազան րոպէին ներկայ է հոգւով Ս. Էջմիածնում, երբ նորընտիր հայրապետը բազմում է Լուսաւորչի աթոռի վրայ: Միատեսակ զգացմունք է յառաջ բերում նաև հայրապետի մահը, յուղարկաւորութիւնն ու թաղումը:

Հայրապետական պաշտօնի հետ կապուած մի քանի գործողութիւններ ևս համազգային նշանակութիւն ունին: Այսպէս են միւռոնի օրհնութիւնն ու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը: Միւռոնօրհնութիւնը երբեմն Էջմիածնում է խմբում 20—25 հազար հայ ժողովուրդ, ուսմիկն ու աղնուականը, տգէտն ու գիտունը, տղամարդն ու

կինը, ծերունին ու պատանին, ամենքն իրենց բաժինն ունին այս սրբազան հանդիսի մէջ, ամենքի ճակատին նոյն միւռտնն է դրոշմուած, ամէնքին միացնում է նոյն մայր եկեղեցու և նորա հայրապետական աթոռի գաղափարը: Կարիք չունինք բացատրելու, թէ այսպիսի համախմբումները ինչ նշանակութիւն ունին մտքերի շփման և ուրիշ տեսակէտներով: Հայոց հայրապետի ձեռնադրած եպիսկոպոսներն են հովոււմ ամբողջ հայութիւնը և այդպիսով կապում Մ. Աթոռի հետ: Սոյ և Աղթամարի կաթողիկոսութիւնները ընդունելով ընդհանրական հայրապետի գերիշխանութիւնը, չեն խանգարում նաև իրենց ենթարկուած թեմերի համար ևս ամենայն Հայոց հայրապետութեան համազգային նշանակութիւնը: Հայրապետի ընդհանրական կոնդակները կարգացւում են Հայոց բոլոր եկեղեցիներում, նորա հայրապետական անդրանիկ օրհնութիւնն ու ողջոյնը սփռւում է համայն հայութեան վերայ, նորա անունը յիշատակւում է ամէն տեղ ժամերգութեան և պատարագի ժամանակ: Ամենքը գիտակցում են, թէ նուիրապետութեան մի գլուխ ունին, հոգևոր մի պետ, որի աթոռի հետ կապուելով մի ամբողջութիւն են կազմում:

Հայոց հայրապետն է մեր ժողովրդի ամբողջութեան ներկայացուցիչը, ոչ միայն մեր աչքում, այլ և մեզ վերայ իշխող պետութիւնների առաջ, նա կարող է միայն իւր հօտի ցաւերի և կարիքների թարգմանը հանդիսանալ, նորա դարաւոր իրաւունքներն ու արտօնութիւնները պաշտպանել ոտնձգութեանց դէմ: Նա մեր ազգային եկեղեցու գլուխն է, նրանից են հրահանգ ու կարգադրութիւն սպասում ստորագրեալ բոլոր վարչութիւններն ու պաշտօնեաները: Նորան են ենթարկւում մեր վանական ընդարձակ կալուածները, որոնց կարգաւորութիւնից ու շահեցողութիւնից է կախուած մեր կրթական և միւս հաստատութիւնների ապահովութիւնը. նորան են ենթարկւում մեր դպրոցական, բարեգործական և միւս աստուածահաճոյ հաստատութիւնները: Հայոց հայրապետն

է դպրոցների միատեսակ և բարենպաստակ ծրագիր ու ու կանոնադրութիւն տալիս, տէրութեան առջ ապահովում նրանց դոյութեան իրաւունքը, իւր ստորագրեալ վարչութիւնների ձեռքով հսկում նրանց կարգաւորութեան և յառաջագիմութեան վերայ, Հէնց միայն դպրոցական դործն այնպիսի ընդարձակ ծաւալ է ստացել և այնպիսի շոշափելի բարիք դարձել մեր ժողովրդի համար, որ նրանց խելացի կառավարութիւնն ու կարգաւորութիւնը բաւական է մեզ շնորհապարտ կացուցանելու հայրապետական աթոռի առաջ: Բայց նորանից է կախուած ուրիշ շատ հաստատութիւններ ստեղծել կամ եղածները բարձրացնել՝ մեր ժողովրդի դաստիարակչական և քաղաքակրթական յառաջագիմութիւնը հաստատուն հիմքերի վերայ դնելու համար: Նա է ընտրում եպիսկոպոսացուներին, առաջնորդներին ու Սինոդի անդամներին, գոնէ ներկայ օրէնքով, և ուրեմն նրանից է կախուած արժանաւոր և իրենց բարձր կոչման համապատասխան, անձնուէր, գիտակից անձնաւորութիւններ պաշտօնի կանչել: Նորա գերագոյն իշխանութեան է ենթարկուած քահանայական՝ ժողովրդի անմիջական և մերձաւոր հովիւների՝ դասը, որի նիւթական, բարոյական և մտաւոր վիճակը բարձրացնելու յաջողութիւնը մեծ մասով կախուած է ամենայն Հայոց կաթողիկոսից:

Հայրապետական աթոռի հետ անբաժան կապուած է Ս. Էջմիածնի միաբանութիւնը, հայրապետի հոգեւոր զինուորութիւնը, նորա հրամանների և լաւագոյն ցանկութիւնների իրագործողը: Այդ միաբանութիւնից են դուրս գալիս մեր նուիրապետութեան բարձր ներկայացուցիչներն ու պաշտօնեաները, այնտեղից պէտք է դուրս գան նաև բանիբուն քարոզիչներ, հայ եկեղեցու աստուածաբաններ և գիտնականներ: Վերակազմել այդ միաբանութիւնը ժամանակի պահանջների համեմատ կրթուած, գիտուն և գործին ընդունակ մարդկանցով, Ս. Հայրապետի դործն է: Մ. Աթոռի հոգեւոր ճեմարանը բարձրագոյն դպրոց դարձնել, յատուկ ուսուցիչներ պատրաստել, հոգեւորական և

աշխարհական, որոնք դիւրութիւն ունենան ազգային և եկեղեցական դիտութիւնները մշակել, Մայր Աթոռի մատենադարանն ու թանգարանը, տպարանը կարգաւորել, ճորայնել և շահագործել մեր անցեալի ուսումնասիրութեան համար, և ապահովել մեր ներկայ քաղաքակրթութեան ինքնուրոյնութիւնն ու զարգացումը, Մայր Աթոռը վարչականի հետ դարձնելով նաև մտաւոր շարժման և յառաջագիւծութեան կեդրոն, կախուած է կաթողիկոսի բարի ցանկութիւնից ու եռանդից:

Հայոց եկեղեցին մաքրել օտարամուտ ծէսերից, սնտիապաշտութեան կերպարանք ստացած սովորոյթներից և զարդարանքներից, խրախուսել և զարկ տալ եկեղեցական ինքնուրոյն արուեստի և երգեցողութեան զարգացման, իրենց գոյութեան իրաւունքը կորցրած մեր վանքերին նոր կոչում ու նպատակ ներշնչել՝ հիմնելով այնտեղ դպրոցական, բարեգործական և այլ աստուածահաճոյ բազմատեսակ հաստատութիւններ, ժողովրդի և համայնքի մասնակցութիւնը եկեղեցական գործերի մէջ աւելի կանոնաւորել և կենդանացնել, վերջապէս գումարել ընդհանուր ազգային-եկեղեցական ժողով և նորագոյն կեանքի հետ կապուած խելացի և անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալ, պարզել օտար ազդեցութեամբ չափազանց խճողուած մեր ծիսապաշտութիւնն ու աստուածապաշտութիւնը . . . ամենայն Հայոց Հայրապետի իրաւասութեան ենթարկուած հարցեր են:

Գ.

Մեր ազգութեան յատկանիշ տարրերից ամէն մէկը իւր արժէքն ունի, բայց ամենից կարևորը ազգային եկեղեցին է այժմ մեզ համար: Հայութեան մի ստուար մասը դադարել է իւր պատմական հայրենիքից և ցրուել օտար ազգերի մէջ. նա կորցրել է շատ տեղերում իւր մայրենի լեզուն, ազգային բնորոշ սովորութիւններն ու տեղի հետ կապուած աւանդութիւնները. ազգային գլխականութիւնն

ու պատմութիւնը մեռած տառ է նորա համար, բայց հաւատարիմ է մնացել իւր եկեղեցուն, Հնդկաստանի, Պարսկաստանի խուլ անկիւնների, Փոքր Ասիայի շատ գաւառների, Ռումինիայի, Աւստրիայի հայութիւնը իւր եկեղեցով է անբաժան մնացել ազգութիւնից։ Նա հայերէն չի խօսում, բայց իրեն հայ քրիստոնեայ է համարում, ջերմ և կաթոգին սիրով կապուած Ս. Էջմիածնի հայրապետական աթոռի հետ։ Կրկնում ենք, մեր ազգութեան յատկանիշ տարրերից իւրաքանչիւրն ունի իւր նշանակութիւնը, բայց միութեան ամենից զօրաւոր կապը ազգային եկեղեցին է հայրապետական աթոռով, որովհետեւ բացի կրօնից նա իւր մէջ պարփակում է նաեւ լեզու, պատմութիւն և քաղաքակրթութիւն։

Հայոց հայրապետական աթոռը աստուածային պարգեւ է մեզ համար, դարերի պատմութեամբ սրբազործուած և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կեանքի մէջ։ Զլատել նորա բարոյական ուժն ու հեղինակութիւնը, սառնութիւն քարոզել նորա դէմ և ժողովրդին մոլորեցնել երեխայական անմտութիւն է և ազգամլեաց գործողութիւն։ Որովհետեւ, ինչպէս տեսանք այս համառօտ ակնարկից, Հայոց եկեղեցին իւր հայրապետական աթոռով այն հաստատութիւնն է, որի հետ կապուած են մեր կրօնական-բարոյական և ազգային-քաղաքակրթական լաւագոյն յոյսերն ու տենչերը։ Ազգութիւն և եկեղեցի գաղափարների անբաժանելի մի միութիւն է այն, ամփոփուած միայն մեր ժողովրդի մէջ։ Մենք ունինք անշուշտ կաթողիկ և բողոքական եղբայրներ ևս, բայց նրանք իրենց փոքրամասնութեամբ, առանց պատմական խորին անցեալի, երբէք չեն կարող ընդհանուր, մեծ նշանակութիւն ունենալ։ Նոցա ազգային և բարոյական վերածնութիւնն էլ պայմանաւորուած է Հայաստանեայց եկեղեցու բաղդով։ Հայոց եկեղեցին իւր բարոյական և նիւթական շահերով անբաժան է հայ ժողովրդի ամբողջութեան շահերից, նա գոյութիւն ունի այն հօտի բաղաւորութեան և փրկութեան համար, որ հայ ժողովուրդ է կոչուում։

Նա իւր երկար անցեալով կապուած է եղել հայ ժողովրդի հետ, կապուած է ներկայումս և պէտք է կապուած լինի ապագայում։ Երազատեսների երեակայութիւնն է հայոց եկեղեցու և նորա սպասաւորութեան մէջ կղերականութեան անջատ ոգի տեսնել աղգութիւնից։ Հայ եկեղեցու սպասաւորը նոյնչափ իւր ժողովրդի զաւակն է, նոյն սիրով կապուած իւր հայրենիքի հետ, որքան ամէն մի ճշմարիտ հայ, որի համար թանգ են նախնեաց թողած ժառանգութիւնները։

Մենք յոյս ունինք, որ այս ժամանակաւոր մոլորութիւնները կչքանան, ինչպէս վաղորդեան մէքը արեւի ճառագայթների առաջ։ Հայոց եկեղեցու հիմքը դարերի խորութեան մէջ է հաստատուած, նախնեաց արիւնով շաղկապուած նորա կիրն ու քարը։ Ի՞նչպէս կարող ենք մոռանալ այս ամէնը. «Եթէ մոռացայց զքեզ, Ե՛րուսաղէմ, մոռացի զիս ալ իմ»։ Բայց չենք կարող աչքից թողնել և խուլ ձեւանալ ժամանակի անողորք պահանջի առաջ։ Մեր եկեղեցին կարօտ է վերակազմութեան և վերածնութեան, եթէ նա իւր որդոց սրտի և հոգու առաջնորդն է կամենում լինել և առաջ տանել իւր պատմական մեծ առաքելութիւնը։ Այս գիտակցութեամբ ենք սպասում Լուսաւորչի աթոռակալի ընտրութեան և մեր հայրերի հետ հաւատով ու յուսով առ Աստուած դիմում։ «Միշտ անչարժ պահեա զաթոռ Հայկազնեայց»։

Գ. Վ. Յովսէփեան

